

Եկաւ և ինչ տագնապներու մէջ ըլլալս  
տեսաւ սկսաւ գարձեաբ սպառն ոլլք-  
ներ ընել որ եթե գուրս ելլաս ազդեն  
մէջ այս եղած բաները խօսիս, դիտ-  
ցած եղիք որ ձեր Ա անքին, Պատրի-  
արքին, և միաբանութեան պատիւը ոչ  
ինչ ըլլալեն վերջը և ձեր ինչ ըլլալն  
ալ գուք գացէք գուշակեցէք, և վեր-  
ջը ինչ վնասներու պիտի հանդիպիք  
այն ալ գուք գիտէք, և այլ այսպիսի  
սպառնալից խօսիք ընելով եպիս-  
կոսուսը եւ նատովները վկայ կը կո-  
չքր. բանտէն ելլալով Վ. շքեան Յա-  
կովի ազայի տունը գնացի և այժմ  
բժիշկ կը նայի, այս պատահած դէպ-  
քերը գրի տունելով այսօր տեղւոյս  
Ուռհաֆրազին պիտի խրկեմ տեղեկա-  
ցնելու համար, և գրոյս մէջ նշանա-  
կեր եմ որ ձեզի և Պօլիս այս եղելու-  
թիւնը լուր պիտի տամ: Ուստի Արր-  
բազան հայր ոչ տանելու. և ոչ համ-  
բերելու ուժ կամ կարալսւթիւն մը-  
նաց: ուր պիտի համացնեանէ շուտ  
լրէ. այսուհեաեւ ոչ ես և ոչ ու-  
րիշ մի այս տեղ կենալու կարող չէ,  
ցարդ սենեակս կնքուած է, քանի որ  
այս մարդիկներն այսպէս կը տեսնան  
որ ինձ համար և ոչ մէկ կոլմէն օգ-  
նութիւն մի կոյ, ամեն ուղածնին  
կընեն, և ասկից աւելի ինչ կրնայ  
ըլլալ. գրեցէք Վ. զգին Զեր պատիւը  
պահանջիշէլէն վերջ և մեր դասն ալ  
այն տեղ աեսնուի. այս օրերս Վ. ֆէն-  
տինան Պօլիս պիտի երթաց վարչու-  
թիւնը կրնայ այս եղելութիւնը հաս-  
կցնել. ինձ համար եկած հեռագիր  
կամ նամակ փաստայէն կը բռնեն,  
ահա այսպանս հազիւ կարողացաց գրի  
առնելմացածը գուք կարող էք մաս-  
ձել. յաւել քան զայս մնամ Զեր  
Բարձր Արբազնութեան:

1870 Յ. 22  
Աշխատանքին:

ՅակոբԵան թագւորի նամակին  
որինակը.

Ելք. Յ. 19/1 Յ. 1870

Ա.ՄԵՆՍ.Պ.Ս.ՏԻՒ ՄՐԲ.Զ.Ա.Ն ՏԵՐ

Ի սուրբ Եղիշեալէյ

Կնշուշո ցարդ լած է Զեր Արր-  
բազնութիւնը Աշխատանքին Տիկին  
Փարիս հանրմն առ Վատուած գիտե-  
լու, որ ասկից քանիմը օրյառաջ տե-  
ղի ունեցաւ: Հանդուցեալը՝ եւր  
ողջութեան կտակ մի ըրած ըլլալով  
ժամանակին Վ. զգ. ժողովոյ անդամոց և  
Արաջնորդինն կնքով վաւերացեալ  
Ազգ. Արաջնորդաբանն ի պահեստի  
թողած էր (2):

Դատ առվարութեան յիշեալին մեռ-  
նելէն քանի մը օր եաբը, անդուցոյ Արր-  
բազան Վ. ուաշնորդը (3) ընկերութիւ-  
նու Վ. զգովոյ անդամոց և բոլոր ժա-  
ռանդորդաց, հանդուցելոյն տունը  
գումարուելով յիշեալ կտակը կար-  
գացուեցաւ: Բայց երբ հանգուցեալ  
մին արկզը բացուեցաւ, հոն գտնու-  
եցաւ երկրորդ կտակ մը (4) ևս, վա-

(1) Եղիսպատ վեց տարիէն տեկի է թերեւու-  
որ առաջնորդ չափին այս հրեատակը կերպով առաջնոր-  
դը ո՞ն է: Կտակողին կնիքն ո՞ւ ո՞ է զնացեր, որ ա-  
ռաջնորդի կտակը միացն կը մայ:

(2) Կտակ մը բնչու կտակողին քով չմար և կը-  
տուկախտաբներու ծոցն կ'ելլէ գուրս բոլոր աշ-  
խարհի գրութեանն հակառակէ:

(3) Ա. յո ո՞ր Վ. ուաշնորդն է ձեր, որոյ առաջ-  
նորդութիւնը ոչ Տերութիւնը գիտէ և ոչ Ազգ: վարչութիւնը:

(4) Այս ինչ տեսակ երկրորդ կտակ է, որ հան-  
գուցեալ կտակողին կնիքն ու ստորագրութիւնն  
ունի: Այս կտակը, որ վաւերականութեան ա-  
մենահաստատ փաստն ու պիտանի պարագ այն ունի,  
ինչ պատճառաւ երկրորդ կտակ կ'անուանուի: Առաջնորդ չեղած ժամանակ Վ. ուաշնորդի կտա-  
կութեալըն համար արդեօք:

ւերացեալ ոչ յԱզգ . Վարչնորդարանէ և ոչ ի ժողովականաց<sup>(1)</sup> , այլ երկու անհատ միայն<sup>(2)</sup> ստորագրութիւննեն գրեր են : Ինդ այս Ազգ . Վարչութիւնը հանգուցելոյն տանը մէջ եղած բոլոր գոյքը ի գրի առնելով արձանագրեց , և ստորագրեալ հաստատեց զայն թէ Որբազնն առ աջնորդէն<sup>(3)</sup> թէ ի ժողովականաց թէ ի ժամանգորդաց և թէ ի Գասագարեան Վիրտիչ աղայէ որ ներկայ էր այս ամենուն : Եւ հօն գտնուած քանի մը մանրագին ադամանդեղէնք<sup>(4)</sup> , որք յիշատակուած են երկրորդ կտակին մէջ . կերեալ օրինաւորապէս յանձնուեցան Ազգային պահպանութեան , Եւս սուֆեան Դէորդ աղային քով :

Այս արձանագրութենէ վերջը , Ազգային Վարչութիւնը ինչ ինչ պատճառներու համար արժան համարեց հանգուցելոյն տան բոլոր սենեակները կնքել Ազգ . կնքով . իքաց առեալ այն երկու սենեակներըն , ուր Գասագարեան եղաւը կը բնակին եղեր : Բայց ապա ժառանգորդը՝ չուզելով որ այլ եւս Գասագարեանը այս տան մէջ բնակին , ա-

(1) Կուզէիր որ հանգուցեալ վանցի կարագետի հրամակը ուղարկը ուստուզ , ոչնչացնող , անփաղարար մարսող , ժողովականաց վաւերականը ունենար :

(2) Այս երկու անհատներու ստորագրութիւնը թէրեւս քու ըստածդ ժողովականաց (որ ուրիշ քան մը չեն գիտեր , և նենդութեանցդ գործիքն ըլլալով միշտ բերանդ կը նային ամեն շարժումներուդ համաձայն յարմարնել իրենց շարժումնը ) . Հարիւր հատէն աւելիին արժէքն ունենաց . և այս ոչ եթէ մեր քով , այլ նոյն ինքն երկրիդ բնակացը և օտար աղգաց քով :

(3) Գլուխդ փարատի այդ Արբազնն առաջնորդը զըր դու միայն կը ձանուշես ամեն աղգայիններէ զատ :

(4) Այդ մանրագին ադամանդեղէններուն որ խսհուն անհատ պիտի կարենայ հաւատք ընծայել , զոր յափշտակելու մոօք ամենաբնչաբազզ Յակովէան թագւորդ պահպանութեան պատրուական կնքել կ'ամսագարես :

ուաջակերցին , որ կամ իրենք եւո մը նան . և կամ նոքա ևս գուրս ելլէն . Վասր վրայ Գասագարեան երկու եղբարցմէ գիր առնուեցաւ որ , մինչ ցկարդագրութիւն թէրէլէին իրենք ևս գուրս պիտի բնակին : Ուստի տէղական կառավարութեան գիտութեամբ տան գուռուր ևս կնքուելով , յանձնուեցաւ զայն իշխանութեանը :

Ոինչ այս մինչ այն Գասագարեան որարոն Յակոբը որ այս պարագաներուս յիշմիր կը գտնուեր , վրայ հասու . և ըստ երկրորդ կտակի ինք կը տակակատար ըլլալը իմացնելով , դըրան բացուելը կուզէր , և գեռ ասոր այս կամ ոչ որոշում մի չի տուած , համարձակեցաւ քանի մը յոյն սրիկայիներու օգնութիւնը<sup>(1)</sup> սրօք և բրօք տանիսին գոնէն ներս մանելով տան դրան կնիքը միայն քակել , և իրենց յատկացուցած սենեակին մէջ բընակիլ :

Նոյն օրէ ի վեր մեր Որբազնն Առաջնորդը իրեւս իւր նուեիրական պարտը՝ Ազգային սրատույն չերժ պաշտպան մնալով իշխանութեան հետ բանակցութեան մէջ էր և է . խնդրելով ինմանէ , որ յանցաւորը ո՞որ և իցէ իւր արժանաւոյ պատիմը ընդունի ի պաշտպանութիւնն Ազգ . պատույն : Այս գործը իւր որոշ կերպարանը ստանալու վրայ էր . երեկ Վասրուածատուր վարդապետը Գահիրէն մանաւոր հոս իշխելով , իրը թէ ըստ երկրորդ կտակի տան քանի մը կահերը Որբազնութեան թօղուցած ըլլալուն պատրուականւ :

(1) Ինչ մէծ ամբարհաւածութիւնն Աշէքսանդրից մէջ երեւելի անձիքներ , Յոյն սրիկաներ անուանելու չափ յանդ գնութիւն :

(2) Բուն կտակը պատրուակ անուանելով պատրուակ եղած կը կարծէր : Եթէ այդպէս է շատ Կ. A.R.A.R. @

համարձակի Գասպարեանց հետ միւ անսպով բոլոր կնքեալ սենեակները բանալ իբր ներկայացուցիչ ՈՒթբա նութեան կահ կարտսիքն ՚ի գրի առ նուլ և անմիջապէս աճուրդատունը (մեղաթ հանէ) փոխադրել, ՚ի մնջ նախատինս Վզգին և Հայութեան :

Ի եմք յուսով որ Ձեր Արբազնութիւնը Աստուածատուր վարդապետին այս ապօրինաւոր ընթացից<sup>(1)</sup> ոչ համամիտ է և ոչ տեղեակի ինչպէս նաեւ կը ցաւիմք տեսնել, որ նորա այս շարժումը պարզապէս նախատինք պիտի բերէ առանց Ձեր գիտութեան .

Աստուածատուր վարդապետի բազմադիմի սուտերէն, անհամեմատ կարիտուկներէն, և մանաւանդ Ձեր Արբազնութեան զրկելու համար պատրաստած սուտումնւտ նամակին դրաւածներէն<sup>(2)</sup> յայտնապէս տեսնուիպիք : Քովերնիդ դտնուող քանի մը անտառն ներ որ չեն հասկար երբեք ինչեր կը գործէք . և միշտ ձեր այս ին այս ըստ բռնոտատուած են, թերեւս անոնք համազած են զծեղ այդպէս :

(1) Ասուածատուր վարդապետը ապօրինաւոր ընթացք մը ունեցած չե մինչեւ ցայսօր, և այսօր կտակառարի մը ձեր գողաւթեամք կնքած գոները բանարուն ներկայ գտնուիլն այդշափ ապօրինաւոր ընթացք է եւլու Ձեր առաջութեան կիրքերէն թելադրուելով բոլորովին անզգամնաթեան զարկած եպիկոպոր, որ սուտ կտակի ինչիք կը զարնէ իւր օտարութեամբ մէջ իրբեւ առաջ նարդ . այսպիսի անձ մը Արբազնիդ կոչելու ուրախութիւնը մը կ'զգաս, ամեխանէնքիէ, գոզամի շահասու երկունիդ իւրարու շատ աղէկ յարմարութիւնիք :

(2) Ասուածատուր վարդապետին առ նորին Արբազնութիւնը գրած նամակին գուրք բնէ տեղեւ կութիւն կրնայք ունենալ գող և աւազակ : Յարձակմանը շանմայէն նամակի հանել և կարդալու դմբակ երբ տեսար որ սուտ ումուտ գրաւածներ են, չգործունէիր իրեն ու այսուհետեւ գրէիր ինչ որ պիտի գրէիր Ազէքսանդրից գողերուն Շաղառերուն հռչակը, բոյոր աշխարհ ՚ի զարման կը բաթած է, երբ Ազէքսանդրից կտակարտութիւնին ընդունի զծեղ պաշտօնի մէջ, հարկաւ գողեր կը զարման, ըստ օրում գուրք ինքնին գողերու պարագայուն եր այդ բարձրին մէջ : Եկեղեցւոյ փակեալ սենեակի մը մէջ միակ վարդապետի մը զոյ 12 հոգի (՚ի բաց առեալ զծառօչոյ) բիբերով ու

եկցաւ որ ամենասողբմելի գումարիմը համար կ'ուզէ Ձեր կողմանէ պաշուուան մնալ այնպիսի յափշտակութեանց . որ մարդուս ոսկերքը կը քատմինին լսած ժամանակ : ՚Քանզի կընայ վկայել Ձեր Արբազնութիւնը ևս որ հանգուցեալը իւր մեծակառաց առաջին կտակաւ, զինի իւր մահուան, Վզգին նուէր բրած ժամանակ, երկրորդ կտակը որ աղտոտ ձեռքեր համարձակեր են շնելու որուն մէջ հանգուցելուոյն կնիքը միայն կայ<sup>(1)</sup>, բայց ոչ օրինաւոր վկայութիւն մի և ոչ եկեղեցականի հաստատութիւն մի, ինչ որ գրել չի գիտոյզ կնկան մի համար պէտք է ըլլալ ըստ առաջնոյն . սոյն երկրորդ կտակին մէջ կըսէմ, տան յիշատակութիւնը ամենեւին չըլլալով, իւր թէ Գասպարեան ՈՒթիչը ծախու առեր է եղեր զայն, ՚ի բաց թողով այն ամէն ծանրագին անգամանդները, որ մահուանէնքին օր յառաջ քովը տեսնուած էր . և այժմ անոնց հոտը անգամ չի կայ<sup>(2)</sup> : Այս առենուն համար կըսէմ . օրինաւոր սեպեր են տան քանի մի կտօր կարասիները երկրորդ կտակաւ միաբանութեան

գանակով կը վաղէք կը յարձակիք : Անզգամնաթեանդ այս վերնին ծայր կտակարտութեան համակը, մատալուտ կործանումն կը գուշակէ անզգամն, և անիսիզչ : Տեսուի զամբարիշտն վերացեալ և բարձրացեալ որպէս վլոցըն իբանանու, անցի, և ահա ոչ էր, ինպրեցի, և ոչ գտաւ տեղի նորա ու Ա. Պատրիարքի Նգիստոս գտնուած ժամանակ նորա առջեւ ըրած անզգամնաթիւններդ, լրբութիւնները, ետնպիգութիւններդ, զըս վկամբար ներեց քեզ, կարծեօիր որ այս անգամանդ կըներուի քեզ :

(1) Հանգուցելոյն կնիքեն աւելի բնէ կուզէ վաւերատկան ըլլալու համար . քանի մը անզգամներուդ կնիքը կը պակիք :

(2) Այս տեսակ կորուսա մը՝ գուք ուր որ երթայ կնիքը ձեր գողը ձգել . հիմա որ չես զանոր և հոտ չես առներ ոչ եթէ չկան, և հոտ չեն բուրեր, այլ արդէն քու համբարդ են պահառած, փլնուածութիւն բնէ հարկ կայ :

թօղսուլ յաւսալով որ խեղճ գումարով մի անոր պաշտպանութիւնը եւս դանելով զիւրապէս պիտօր յաջողին մարսել հայակապ չէնք մի և այլն<sup>(1)</sup> ։ Եւ ահա Աստուածատուր վարդապէտ մի որ առաջինը կ'ըլայ ապերախտ գըտնուող իւր ուխտին և առ ազգն ունեցած հաւատասրմութեանը ։

Հարկ չէ այս ամենուն ոսուգութիւնը հստ բննել, անշուշտ քննութիւնները և օրինաւորութիւնը ամեն ինչ պիտօր հաստատէ ՚ի շնութիւն ամենեցուն + ի այց ինչ և որ իրաւամբ կը համարձակի Աստուածատուր վարդապէտը, ինքնագլուխ խառնուիլ և մատ դնել խնդրոյ մի՛ որ երբէք իրեն չը վերաբերիր, երբ դատի ներքեւ է այն, երբ մանաւանդ Զեր Արքաղնութեան տեղեկութիւն չունենալը եւս հաստատուած է<sup>(2)</sup>։

Եւ որովհետեւ թէ Ամեն. Արքաղնութեանդ առ մեզ գրած նա-

(1) Տ. Գասպարեաններուն ինչ մտաց և նուատուի ծառայելը ալ զիստ ընդհ. Ազգը. ինչպէս որ քու յստիկութիւններդ իսկ զիստ : Տ. Գասպարեաններու հաւատարմութիւննը կառավարութիւնը վիշտելէն և տքը օտար տերութեանց հիւուտարաններն ալ կը վկայէն : Եթէ երբէք հասկացող ազգայնոց փորձառութեան զիստութիւնն հարցունենք՝ պիտի ըստն որ որչափ Յակովիթեանիք անդգամութեան մէջ նոյնափ ալ Գասպարեանք հաւատարմութեան մէջ փորձուած էն :

(2) Ն. Արքաղնութիւնը Աստուածատուր վարդապէտը թաղած է Եղիստոս վանուց գործակաւարութեան և կալուածապետութեան պաշտօնիւ. վանուց վերաբերեալ որ և է գործերուն կրնայներկոյ գտնուիլ, առանց ձեզներկայանալու, վասն զի ձեզի հետ հաց չուտելու օրինաւորութիւնարք առաջ են սորմած է. «որ ամբարտաւան էր աջօք, և ադահ սրիւ. ընդ նման և հաց ոչ ուտեին» :

ՊՄ լնիք ըստիցք անհաւատից. քանիզ զի՞նչ հարդրութիւն է արդարութեան ընդ անորէնութեան. և կոմ զի՞նչ հաւատարութիւն է ըստոց ընդ խաւարի. և կամ զի՞նչ միաբանութիւն է քրիստոնէ ընդ բելբարոյ. կամ զի՞նչ բաժին կայ հաւատացելոյն ընդ անհաւատին. կամ զի՞նչ նմանութիւն է տաճարի Աստուածոց մէհենաց . . . . վասն որց ելէք ՚ի միջոց նոցա, և մէկնեցարուք ասէ տէր, և ՚ի պիզծո մի մերձենայք ո :

մակներով և թէ Գեր. Ամեն և պիտիսպասին կրկնակի յանձնաբարութիւններով. յիշեալ վարդապէտը առանց մեր գիտակցութեան չի պիտի միջնամուէ իրեն չի վերաբերելիք խնդրոց ինչպէս և բազմիցո միաբանութեանդ օգտակար եղած միջոցները յուցուցած էնիք իրեն. վասն որց կը պարտաւորիմուե նորա այս պայմանութիւնը եւս ծանոթացաւ թիւն է անոր ոչ գովելի ընթացքը որ պարզապէս միաբարթեան բարի համբաւոյն ամօմն ու նախատինքն պիտօր լինի. ՚ի մեծ ցաւորտի ձերդ Արքաղնութեան ու ամենայն ճշմարիտ տղգասիրաց :

Որ և խորին յարգանօք համբաւրելով զոջ ամենապատիւ սրբաղնութեանդ մինամ ծառաց :

Նորին վեհութեան ՚Նորապար Փալային Քոխանորդ Ո. Յակովէեան : Ամենապատիւ Տ. Տ. Եւայի Արքաղնու արք Եսիլիուպու և Պատրիարք Արքոց Յակովէեան Վահուալու և Արքուալու :

Հասարակաց կարծեաց ասենին կը թողումք գատել և իմաստափել. ինչ ըսելէ կտակ մը որ կտակողին ոչ ստորագրութիւնն ունի, և ոչ կնիքը. բայց միայն կտակակատարներուն կընքովը վաւերացած :

Եւ հանգուցելոյն ինչքերը գրի առնուած ժամանակնոյն ինքն հանգուցելոյն ինքնագիր կտակը սնառուկէն ելլէ բուն իւր ստորագրութեամբն ու կնիքովը վաւերացած, և իրեն կտակակատար որոշած հաւատարիմ անձ մը Գասպարեան Ուծ. Յակովը Ացա, կովը Ացա, և ոչ ինքնակոչ խումբը մը ընդարացներ: